ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՊԱՂԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 3-Ն

<<21>> փետրվար 2013թ.

## ՊԱՂԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետով համայնքի ավագանին`

ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաստատել Պաղաղբյուր համայնքի 2013-2016թթ. զարգացման քառամյա ծրագիրը համաձայն հավելվածի:

| | Ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| 1 | Դումիկյան Ռոբերտ | | | |
| 2 | Շահնազարյան Լևոն | | | |
| 3 | Շարոյան Լիլիա | | | |
| 4 | Շարոյան Ալեքսանդր | | | |

Համայնքի ղեկավար` Ռ. Դումիկյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

## ՊԱՂԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

## 2013-2016թթ.

## ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

## ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց համայնքի ղեկավար՝

Ա.Դումիկյան

Հաստատվել է համայնքի ավագանու 21.02.2013թ. N3-Ն որոշմամբ

ՊԱՂԱՂԲՅՈՒՐ -2013թ.

# 1.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

## ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Պաղաղբյուր /նախկինում Սոյուղբուլաղ/ գյուղը հիմնադրվել է 1870թ.վերաբնակեցվել է 1989թ.-ին հայերի կողմից:

Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1750մ բարձրության վրա:Գյուղն ունի բարձրաբերձ զագաթներովսարեր,որոնք ունեն սառնորակ աղբյուրներ:Պաղաղբյուր համայնքը սահմանամերձ գյուղ է:

Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է:Հաճախակի է ուժեղ փոտորիկն քամիները:Ամռանը զով է:

## ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղում բնակվում են 156 բնակիչներ,որոնցից տղամարդիկ կազմում են բնակչության 65 տոկոսը:

Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

| | |
|---|---|
| 1.երեխաներ 0-6 | 5 |
| 2.դպրոցականներ 7-17տ | 21 |
| 3.18-62 տարեկանները | 75 |
| 4.թոշակառուներ | 2 |
| 5.աշխատունակներ | 70 |
| 6.հաշմանդամներ | 2 |
| 7.միակողմանի ծնողազուրկ | 2 |
| 8. երկկողման ծնողազուրկ | 0 |

Գյուղը ունի 30 ծուխ, որից 5-ը ընդգրկված են "Փարոս,, համակարգում:

## ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Գյուղը կառավարվում է համայնքի ղեկավարի կողմից, ով ընտրվում է չորս տարին մեկ անգամ:Գյուղապետը ստեղծել է աշխատակազմ հետևյալ կառուցվածքով՝

- Աշխատակազմի քարտուղար 1դրույք
- Առաջատար մասնագետ 1 դրույք

Աշխատակազմի ամբողջ ապարատը բաղկացած է 3 հոգուց: Ավագանու անդամների թիվը 5-ն է:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված ՀՀ կառավարության 14.03.1997թ.-ի թիվ 51 որոշմամբ հետևյալ կազմով.

- Ակումբի շենք -կիսակառույց թանդված վիճակում
- Ներհամայնքային ճանապարհներ -անբարվոք վիճակում
- Գյուղապետարանի շենք -ենթակա է հիմնանորոգման
- Ջրմուղի ցանց -անմխիթար վիճակ

Ջրի ներհամայնքային ցանցը կառուցվել է նախորդ տարվա 60-ական թվականներին,որի մաշվածությունը շատ մեծ է,կարիք ունի կապիտալ վերանորոգման: Ճանապարհային ցանցը նույնպես վերանորոգման կարիք ունի: Միջհամայնքային ճանապարհները 20 տարուց ավելի է որ ոչմի գործ չի կատարվել: Համայնքը գազաֆիկացված չէ:

### ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղբահանումը կատարվում է անհատական ձևով: Ջրամատակարարման ցանցի մաշվածության պատճառով բնակչության մի մասը ջուր չունի ստիպված կրում են հարևաններից:

### ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կա 30 առանձնատուն, 12հա տարածքով :կարիքավոր և բնակարանով անապահով 3 ընտանիք:

### ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարածքը 5999.18հա, որից

- Վարելահող 24.51հա
- Խոտհարկ 660.85հա
- Արոտավայրեր 3825.46հա
- Տնամերձ հողեր 12 հա
- Ջրեր 24.38հա
- Անտառային 1.29հա
- Այլ 1368.08հա

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ոռոգման ջուր չունենալու պատճառով երաշտի տարիներին համայնքը դժվարանում է կազմակերպել գյուղ.մթերքների արտադրությունը:
Անասնապահությամբ զբաղվում է բնակչության հիմնական մասը: Երաշտի տարիներին անասնապահության բնագավառում մեծ դժվարություններ են առաջանում:

### ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համայնքը ունի հիմնական դպրոց,որտեղ սովորում են 12 աշակերտ : Անմխիթար վիճակում է և դպրոցի շենքը և խմելու ջրի ցանցը:

### ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ, ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Համայնքը չունի գրադարան,սպորտային դահլիճ և խաղահրապարակ, թատրոնի և կինոյի շենք, չկա եկեղեցի:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Գյուղում կա բուժկետ որը գտնվում է բարվոք վիճակում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Համայնքը սահմանամերձ գյուղ է
- Ունի սառնորակ աղբյուրներ
- Համայնքն ունի 5999.18հա /խոտհարկ և արոտ/որը պարարտացմանդեպքում կապահովի լավ խոտ:
- Համայնքն ունի լիճ 6.8հա, որտեղ կարելի է կազմակերպել ձկնաբուծական համալիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Ներհամայնքային ճանապարհների վիճակը
- Համայնքային հողերի թույլ բերրիությունը
- Գործազրկություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

- Ունենալով հողային ֆոնդի մեծ պաշարներ, հնարավոր է զարգացնել անասնապահությունը
- Անասնապահությանը զուգահեռ զարգացնել վերամշակվող արտադրությունը

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Հորդառատ անձրևների պատճառով որոշ հողերի ճահճացումը
- Հարկերի և վարձավճարների գանձման դժվարությունները մեծ վտանգ են սպառնում համայնքի բյուջեի կատարմանը

## 2. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ռազմավարություն

Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավվել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, գյուղը դարձնել գեղեցիկ, բարեկարգ և ամենաբարեկեցիկ բնակավայրերից մեկը:

Բարեփոխումներ կատարելով, նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին՝

- Զարգացնել գյուղատնտեսությունն ու անասնապահությունը համայնքում
- Կազմակերպել համայնքի բնակչության մշակութային կյանքը և հանգիստը, աշխատանքից ազատ ժամերին

## 3. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

ԾՐԱԳԻՐ 1.

ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Համայնքի ջրամատակարարման ներքին ցանցը կառուցվել է 1996թ.: ջրագծի երկարությունը կազմում է 7կմ:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակներն են՝

- Համայնքի յուրաքանչյուր անդամին ապահովել խմելու ջրով
- Կառուցել նոր խողովակաշար և վերանորոգել մաշված խողովակները
- Ջրաբաժանման կետում կառուցել մաքրման կայան՝ ֆիլտրացում և քլորացում

- Կնքել պայմանագիր Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի հետ, որի համաձայն ծրագրով պահանջվող գումարի 90 տոկոսը կհատկացվի հիմնադրամի կողմից, իսկ 10տոկոսը համայնքի աշխատուժի ներդրումներով
- Կազմել ԾԻԳ համայնքի անդամներից` կատարվող աշխատանքները վերահսկելու համար

Պատասխանատու համյնքի ղեկավար

Ծրագրից սպասվող արդյունքները

Իրականացնելով այս ծրագիրը կլուծվի ազգաբնակչության առողջապահական, սոցիալ-տնտեսական պայմանների բարելավումը:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատումը

Նախնական մոտավոր հաշվարկներով ջրագծի կառուցման և մասնակի վերանորոգման աշխատանքների արժեքները կկազմի 15մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ 2.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՔԻՆ ՆԵՐՔԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Ներածություն

Համայնքի արտաքին և ներհամայնքային ճանապարհների երկարությունը կազմում է 15կմ, որից 7-ը կենտրոնական ճանապարհն է: Գյուղամիջյան ճանապարհները անանցանելի է:

Ծրագրի հիմնական նպատակն է`

- Ապահովել տրանսպորտի բոլոր միջոցների համար բավարար երթևեկության պայմաններ տարվա բոլոր եղանակներին:
- Վերացնել փողոցների ջրափոսերը

Ծրագրի խնդիրներ`

- Կնքել պայմանագիր Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի հետ,
- Ապահովել համայնքի կողմից պահանջվող ներդրումը
- Կազմել ծրագրի իրականացման նախագծա նախահաշվային փաստաթղթերը
- Հայտարարել մրցույթ և որոշել աշխատանքներն իրականացնող կապալառու շին. կազմակերպություն
- Ձեռք բերել ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներ, որի համար ծախսվում է 20հազ ԱՄՆ դոլար:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Իրականացնելով այս ծրագիրը համայնքը կապահովվի արտաքին և ներհամայնքային ճանապարհներով, կբարելավվի գյուղի ազգաբնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

## ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

| Հ/հ | Ցուցանիշներ | Չափի միավոր | 2012թ. փաստ | 2013թ. կանխատեսվում է | 2014թ. կանխատեսվում է | 2015թ. կանխատեսվում է | 2016թ. կանխատեսվում է |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Համայնքի տարածքը | հա | 5999.18 | 5999.18 | 5999.18 | 5999.18 | 5999.18 |
| 2 | Բնակչության թիվը | Մարդ | 156 | 156 | 160 | 160 | 160 |
| 3 | Ծնունդ | Մարդ | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| 4 | Մահացություն | Մարդ | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| 5 | Աշխ.ռեսուրսները, այդ թվում` | Մարդ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | գրաղ.բատ տնտես. ճյուղերի | Մարդ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 6 | Գործազրկության մակարդակը | Տոկոս | 80 | 80 | 80 | 80 | 80 |
| 7 | Առևտրի և հասարակական սննդի օբյեկտների թիվը | Հատ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 8 | Պահուստային հողեր | Հա | 4780 | 4780 | 4780 | 4780 | 4780 |
| 9 | Պահուստային հողերի օգտագործման մակարդակ | Տոկոս | 10 | 12 | 12 | 12 | 12 |
| 10 | Խմելու ջրի ներհամայնքային ցանցի երկարությունը | Կմ | 7 | 7 | 7 | 7 | 7 |
| 11 | Ներհամայնքային ոռոգման ցանցի երկարություն | կմ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 12 | Ոռոգման համակարգի տակ ընկած հողեր | հա | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 13 | Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարություն | Կմ | 7 | 7 | 7 | 7 | 7 |
| 14 | Չբարեկարգված փողոցների և ճանապարհների երկարություն | Կմ | 7 | 7 | 7 | 7 | 7 |
| 15 | Մասնավոր բնակ.ֆոնդ | Հազ.կմ | 1200 | 1200 | 1200 | 1200 | 1200 |
| 16 | Բնակ. Կարիքավոր ընտան. Թիվը | հատ | 3 | 3 | 3 | 3 | 3 |
| 17 | Մեկ շնչին ընկնող ջրի սպառումը | l/օր | 20 | 20 | 20 | 20 | 20 |
| 18 | Ջրի կորուստները ցանցում | Տոկոս | 20 | 22 | 25 | 25 | 27 |
| 19 | Սովորողների թիվը դպրոցում | Մարդ | 12 | 12 | 12 | 12 | 12 |
| 20 | Գյուղապետարանի և Ենթակառուցվածքների ընդհանուր թիվը | Մարդ | 3 | 3 | 3 | 3 | 3 |

## ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Հազ. դրամ

| հ/հ | Եկամուտի տեսակը | 2012թ. փաստ | 2013թ. կանխատեսվում է | 2014թ. կանխատեսվում է | 2015թ. կանխատեսվում է | 2016թ. կանխատեսվում է |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Պահուստային ֆոնդ | 150.0 | 150.0 | 150.0 | 150.0 | 160.0 |
| 2. | Գույքահարկ | 176.76 | 218.6 | 230.0 | 230. | 230. |
| 3. | Հողի հարկ | 277.0 | 157.8 | 160.0 | 160.0 | 160.0 |
| 4. | Ոչ գյուղ. նշան. հողի հարկ | 0.04 | 0.04 | 0.04 | 0.04 | 0.04 |
| 5. | Այլ ոչ հարկային եկամուտներ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 6. | Հողի վարձավճար | 511.00 | 422.6 | 430.0 | 430.0 | 430.0 |
| 7. | Տեղական տուրք | 2.0 | 2.0 | 2.0 | 2.0 | 2.0 |
| 8. | Հողի օտարումից | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 9. | Դոտացիա | 3,500.0 | 3,500.0 | 3,500.0 | 3,500.0 | 3,500.0 |
| 10. | Այլ պաշտ. ստա. սուբսիդիա | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| | Ընդամենը եկամուտներ | 4.466.88 | 5.299.0 | 5.300 | 5.300 | 5.300 |
| | | | | | | |

# ԳՅՈՒՂՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

1.գյուղատնտեսական տնտեսությունների թիվր -30

- Անհատական տնտեսություն -30

2. գյուղարտադրանքի հիմնական տեսակի արտադրություն.ց

- Կատոֆիլ -0
- Կաղամբ -0
- Բանջարաբոստ.կուլտ. -0
- Կաթ -1300
- Միս -450
- Բուրդ 0
- Ձու -500
- Մեղր 5

3. ցանկատարածությունները

- Կարտոֆիլ -0
- Բանջարաբոստ.կուլտ. -0
- Կաղամբ -0
- Ցորեն -0

4. անասնագլխաքանակը, հատ

- Խոշոր եղջրավոր անասուններ 221
- Այդ թվում՝ կովեր 105
- Մանր եղջրավոր անասուններ՝ - 0
- Խոզեր -0
- Թռչուններ - 91
- Այդ թվում հավեր՝ -51
- Մեղվաընտանիք ՝ 15

5. գյուղատնտեսական մեքենաների և գործիքների քանակը, հատ

- Անիվավոր տրակտոր 1
- Տրակտորային կցասայլակ -0
- Գութան -0
- Խոտհնձ. Կոմբայն – 0
- Թրթուռավոր 1

Հավելված 1

# ԴԱՂԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

